

Կոնցեպտային դիզայնի մրցույթի պայմանները



Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի համակարգման ներքո մի խումբ էնտուզիաստներ նախաձեռնել են արևային տեխնոլոգիաների կիրառմամբ և էլեկտրական շարժիչով աշխատող արտաճանապարհային առաջին ամենագնաց մեքենայի ստեղծումը:

Հաշվի առնելով բաց հարթակ տեխնոլոգիաների կիրառումը, ինչպես նաև տեղեկատվությունը հասարակության լայն զանգվածներին հասանելի և մատչելի դարձնելու գործոնը, **հրավիրում ենք կրեատիվ դիզայներների մասնակցելու նախնական կոնցեպտային գծագրման մրցույթին:** Որպես արդյունք նախատեսում ենք ունենալ նշված նախագծի առաջնային պատկերը, որի հիման վրա կստեղծվի նախագծի հիմնական տեսքը:

Մրցույթի պայմանները՝

1. Նախագծի գծագրումը պետք է կայանա Jeep Cherokee մեքենայի բազային հիմքի վրա:
2. Նախագիծը պետք է հնարավորինս մոտ լինի իրական պատկերին, փոխանցի արտաճանապարհային Jeep Cherokee մեքենայի արտահայտիչ տեսքը:
3. Նախագծում պետք է հստակ ընդգծված և անզեն աչքով տեսանելի լինի այն հանգամանքը, որ մեքենան աշխատելու է էլեկտրական շարժիչով (electrical engine visibility):
4. Նախագծում պետք է հստակ երևա մեքենայի երեսպատումը արևային պանելներով (ճկուն արևային պանելներով):
5. Վերոնշյալ չափանիշները հաշվի առնելով՝ որպես արդյունք ակնկալվում է ունենալ մաքսիմալ մանրակրկիտ նկարային և գծագրային պատկեր, ոչ ավել քան 10 էջ:

Մրցույթի ժամկետները՝

Մրցույթին մասնակցելու համար խնդրում ենք գրանցվել հետևյալ հղումով՝ <https://docs.google.com/forms/d/1-pulxxAIMRhb9DMNpNCWSpAbhBgYHgXNcOsCVQhfpY8/edit>

Տարբերակները ընդունվում են ruzan.harutyunyan@r2e2.am էլ-փոստին, վերջնաժամկետն է 14 դեկտեմբերի 2017թ., 19:00:

Լավագույն տարբերակներ ներկայացողները կներգրավվեն արևային տեխնոլոգիաների կիրառմամբ և էլեկտրական շարժիչով աշխատող արտաճանապարհային առաջին ամենագնաց մեքենայի ստեղծման խմբում որպես խորհրդատու: Նախատեսված է գումարային անակնկալ պարգև:

Լրացուցիչ տեղեկատվության համար կարող եք դիմել ՀՎԷԷ հիմնադրամ հետևյալ հեռախոսահամարով՝ +374 10 588 011: